


Журнал

журнальный




$$\cancel{891.41 - 95} \\ \cancel{35 - 49}$$

Համարակութիւն „Ն Ի Է Ր Ա Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Ն“  
Ընկերութեան № 23

30 MAY 2011

ԵՐԳԵՎԻ ԵԼԱՅԻՉ

# ՓԵՐԹԿԱՆԵ



புதிய கலை

Տպարան Ն. Աղասիեանի, Պոլից. 7

Հրատարակութիւն „ՆԻԿՐ ՄԱՆՈՒԿԵՆՐԻՆ“  
Ընկերութեան № 23

8891.715.

5-27

ԵԿԵՆԻ ԵԼԱԶԻԶ

Կ



# Փ Ը Ր Թ Կ Ա Ն Ը

○○○○○

343

Թարգմ. Եվրեև Սարգսեան

Յաւելած «ՀԱՅԿԵՐ» ամսագրի

○○○○○○○○○○

ԹԻՖԼԻԶ

Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7

1914

05.04.2013

321

## Փ Ռ Թ Կ Ա Ն Ը

Պատմւածք Եւգ. Ելաչիչի

Մարգօն բոլոր խաղալիքներից աւելի սիրում էր իր փոքրիկ ողնուն. Ա՛խ, դա ի՞նչ հրաշալի ողնի էր. Այնքան լաւիկն էր, այնպէս սիրունիկ, ուղղակի աննման. Նրա մասին պէտք է երկար պատմեմ. Նրա հատը շատ քիչ կը ճարւի: Մարգօյին բոլորն անւանում էին—«Մեր մե՛ծ Մարգօն»: Հայրիկն ամեն առաւօտ կանչում էր.

—Ո՞ւր է իմ մե՛ծ Մարգօն:

Ճիշտ է, Մարգօն միայն վեց տարեկան էր, բայց նրա քուրիկ նազիկը երկու տարեկան էլ չըկար: Այ, նազիկը փոքրիկ է, պստիկ, իսկ Մարգօն մե՛ծ է:

Ողնու անունը «Փոթկան» էր: Նրան բռնել էին ամառը, անտառում և բերել Մարգօյի հայրիկին: Հայրիկն էլ գնել էր ողնին և նւիրել Մարգօին: Մարգօն շատ էր ուրախացել, էլ քէֆին քէֆ չէր հասնի: Նա թռչկոտում էր ողնու շուրջը, ծիծաղում և ծափ տալիս: Մարգօն պատրաստ էր նոյնիսկ համբուրել ողնուն, բայց էս

անպիտանը ծածկւած էր սուր-սուր փշերով և  
մինչև անգամ ձեռք տալ չէր կարելի:

Մկրտում, նոր գնած ժամանակ, ողնին շատ  
փոքրիկ էր: Ոչ ոքի չէր ճանաչում և բոլորից  
վախենում էր: Հայրիկը դրեց նրան յատակի  
վրա Մարգօի առաջ: Ողնին իսկոյն կուչ եկաւ,  
գնդի ձև ստացաւ: Մարգօն զարմացած նայում  
էր: Նա դեռ ևս չըգիտէր, որ ողնու մէջքին,  
ծործորակին և կողերին աճում են ամուր ա-  
սեղներ:

Մարգօն յետոյ հայրիկից իմացաւ, թէ ին-  
չու ողնիները գնդի ձև են ստանում: Զէ՞ որ ող-  
նին փոքր կենդանի է, նրան զայլերն ու աղ-  
ւէսները կուտեն, ինչպէս ազատուի խեղճ ան-  
ձարը նրանց ձեռքից: Ահա այդ պատճառով ող-  
նին գնդի ձև է ընդունում: Նրա փոքրիկ փորը,  
թաթերը և գլուխը ամբողջովին ծածկւում են.  
գունդը պատած է սուր-սուր ասեղներով: Դէ  
թող աղւէսը ուտի. նա էնպէս կը ծակի աղ-  
ւէսին, որ կը մղկացնի:

Ողնին երկար ժամանակ պարկած էր յա-  
տակին, Մարգօի առաջ: Նա ողնուն ձեռք տը-  
ւեց. օ, ինչպէս ծակեց: Յետոյ Մարգօն էս կեն-  
դանի գունդը ոտով շարժեց: Գունդը շուռ ե-  
կաւ. նոյնիսկ կարելի էր զորել նրան,

—Հայրիկ, հայրիկ, լսիր. այ, ինչպէս փոթ-  
կացնում է ողնին: Լսնում ես,—զարմացաւ Մար-  
գօն:

Ամեն անգամ երբ նրա ասեղներին ձեռք  
էին տալիս, ողնին փըռթացնում էր: Նա կարծես  
թէ երգում էլ էր, փըռթացնում...

Մարգօն շատ ուրախացաւ, երբ վերջապէս  
ողնին բացւեց և վագեց յատակի վրա: Բայց ա-  
ւելի ծիծաղելին այն էր, որ ողնին վագում էր  
և միևնոյն ժամանակ քթով փըռթկացնում:

—Մայրիկ ջան, ինչպէս փըռթկացնում է,—  
ծիծաղում էր Մարգօն, ինչ արագ-արագ է վա-  
զում: Իսկ քթով միշտ փըռթկացնում է:

Սյդպիսով ողնուն անւանեցին Փըռթկան:

Մկրներում Փըռթկանը միշտ թագնուում էր:  
Նա մարդուն չէր ճանաչում, նրանցից սաստիկ  
վախենում էր: Երբ նրան սեղանի կամ պահա-  
րանի տակից հանում էին, իսկոյն գնդի ձև էր  
ստանում: Փըռթկանը վախենում էր թէ իրեն  
կը վսասեն, կամնոյնիսկ կը սպանեն: Դրա համար  
էլ պաշտպանուում էր այնպէս, ինչպէս կարող  
էր. գնդի ձև էր ստանում և փըռթկացնում: Բո-  
լոր ողնիներն էլ փըռթկացնում են, երբ իրենց  
վանդ է սպասնում: Նրանք դրանով վախեց-  
նում են իրենց թշնամիներին՝ աղւէսներին, գայ-  
լերին և զներին:

Մեր փըռթկանն էլ վախից մարդու վրա էլ  
էր փըռթկացնում:

Բայց Մարգօն, ի հարկէ, չէր վախենում  
նրանից և նոյն իսկ շատ էր սիրում: Նա սե-  
նեակի մի անկիւնում ողնու համար մի ամա-

նով կաթ էր պատրաստել և ամանի կողքին էլ մսի կտորներ դրել:

Եւ որքան ծիծաղելի էր ոգնին, երբ նա ուտում կամ խմում էր: Վաղում էր կաթի պնակի մօտ, կանգ առնում. հոտոտում էր, քթով փչում, յետոյ սև դնչիկը ամանի մէջ կոխելով սկսում էր լակել: Նա կաթը լակում էր կատի նման: Ուտելու ժամանակ Մարգօն կարող էր տեսնել նրա սուր ատամները և կարմիր լեզուն:

Կամ թէ չէ Փըռթկանը վաղելիս յանկարծ մի մսի կտոր էր տեսնում. նա ոչ թէ մօտե-



նում, այլ յարձակում էր մսի վրա, թռչում էր նրա վրա, չանչերով բռնում և սկսում էր ուտել: Երկի ոգնին մտածում էր, թէ որդ է գտել, և աշխատում էր շուտ բռնել, որ չը փախչի: Փըռթկանին ոչ ոք չէր նեղացնում, բոլորն

էլ նրան սիրում էին և քաղցր բաներ տալիս: Այդ պատճառով էլ նա շուտով ընտելացաւ և մարդկանցից չէր վախենում: Նա այլիս չէր թագլնում պահարանների տակ, կամ գնդի ձև առնում: Երբ ոգնուն ուզում էին կերակրել, մատով կամ ոտքով յատակին թխկացնում էին: Նա սովորել էր. շատ լաւ գիտէր, որ յատակին թխկացնում են, նշանակում է՝ կերակրը են բերել: Եւ թխկոցը լսելուն պէս արագ-արագ առաջ էր վազում:

Երբեմն Մարգօն իր սիրած ոգնուն չէր գտնում:

—Ուր է իմ Փըռթկանը, ուր է: Երկի բազմոցի տակ քնի՞լ է: Զէ, չըկայ: Ուրտեղ ես թագլնուել, սիրունիկս:

Զէ, որ չէ: Փըռթկանը չը կայ. Էլ՝ ճար չը կայ պէտք է կանչել:

Մարգօն սկսում էր իր փոքրիկ մատներով յատակը թխկացնել: Թ'ըխկ-թ'ըխկ, թ'ըխկ-թ'ըխկ.

Պահարանի տակից խըշ-խըշոց էր լսւում. այդ Փըռթկանի ձայնն էր: Ահա և նա դնչիկը դուրս է հանում. նայում է թէ ձայնը որտեղից է գալիս: Իսկ Մարգօն յատակի վրա նըստած անընդհատ թխկացնում է, մինչև որ փոքրիկ գազանը վազում է նրա մօտ: Նրա համար միշտ էլ պատրաստ է համեղ կերակրը — մի կտոր կոտլետ կամ միս:

Փըռթկանը միշտ էլ քաղցած էր լինում:

Միշտ յարձակւում էր կերակրի վրա: Եւ լըս-  
ւում էր նրա բերնի շըփ-շըփոցը: Այսպիսով ող-  
նին բոլորովին ընտելացել, ընտանի էր դարձել.  
բայց ուտելիս նրա հետ կարելի էր ամեն ինչ  
անել:

Նրա սրածայր ասեղները դարսւում էին  
միմեանց վրա և կարելի էր նրան շոյել, բայց  
միայն զլիից դէպի պոչը: Իսկ եթէ ձեռքդ պո-  
չից դէպի զլուխը քսէր, ո, ասեղները այնպէս  
կը ծակէին որ...»

Ոգնին ուտում է, իսկ Մարգօն կողքին  
նստած նայում է և հետը խաղում: Նա ոգնուն  
փաղաքշում է, շոյում, ոտները շօշափում, բըռ-  
նում է նրա փոքրիկ սկ պոչիկը: Էս պոչը էն-  
քան ծիծաղելի է, նըրեմն էլ Մարգօն բռնում է  
ողնու ետեի ոտներից և վեր բարձրացնում:  
Բայց ոչինչ. Փըռթկանը կանգնում է առջեկի  
ոտների վրա և ուտում, կարծես թէ շտապում  
է: Ի՞նչպիսի փափուկ, տաք փոր ունի Փըռթ-  
կանը, ինչ գեղեցիկ կուրծք: Կըծքի վրա ասեղ-  
ները չը կային, այլ բըրդի նման փափուկ մազեր:

Նըրեմն հայրիկն ասում էր.

— Մարգօ, ինչո՞ւ ես չարչարում դրան. ին-  
չո՞ւ ես այդպէս տըռըում:

— Ոչինչ, հայրիկ, — պատասխանում էր Մար-  
գօն ծիծաղելով, — ախըր ես կամաց եմ անում.  
Հեմ ցաւացնում: Իսկ իմ Փըռթկանը շտա-  
պան է. նա թոյլ է տալիս իրեն հետ խաղայ: Այս:

Եւ նա կռանում էր իր սիրունիկի վրա  
քիչ էր մնում քեթը կոցնէր նրան ու նայում  
էր աշքերին:

— Զէ. իմ Փըռթկան, դու խելօքն ես, լա-  
ւիկն ես: Կարելի՞ է քեզ մէջքի վրա շուռ տալ,  
հա, կարելի է:

Եւ թէպէտ և ոգնին չէր պատասխանում,  
Մարգօն վերցնում էր նրան իր պստիկ թաթիկ-  
ներով և արագ շուռ տալիս:

Ոգնին մէջքի վրա պարկած թափահարում  
էր չորս ոտիկները: Բայց նոյնիսկ համբերատար  
Փըռթկանը չէր ուզում այս գիրքով պարկած  
մնալ. նա զլուխը թափահարում էր, ոտքերը քու-  
ցին-քուցին անում և աշխատում էր շուտով շուռ  
գալ ու կանգնել:

Փոքրիկ Լուսիկն էլ ոգնուն շատ էր սիրում:  
Նա գեռ ես խօսել չէր կարողանում և ոգնուն  
«Փի-Փի» էր ասում:

— Լուսիկ, ուր է Փըռթկանը, — հարցնում էր  
մայրիկը, — որտեղ է Փըռթկանը, հապա գայիք  
նրան:

Լուսիկը հասկանում էր մայրիկի ասածը և  
սկսում էր որոնել: Սկսում էր սենեակի մէջ  
ման գալ, առտիկներով թըփթըփացնել և սեղա-  
նի ու աթոռների տակը նայել: Ո՞ւր է ոգնին:  
Իսկ ինքը ինչ որ բան է բլբլացնում: Լուսիկի  
ասածը հասկանալ չի լինում, միայն իմացւում

է «Փի-Փի» բառը։ Նշանակում է խօսքը ողնումասին է։

Ահա Լուսիկը մօտենում է բազմոցին։ յանկարծ այնտեղից լաւում է։ «ՈւՓ, ՓՌՐ, ՓԻ, ՓՌՐ»։ Այդ ողնին է։ Նա քնած էր, սակայն նրան անհանգստացրին և որթնացրին։ Ողնին նոյնիսկ վախեցաւ և քնաթաթախ սկսեց գրոթկացնել ու փշշացնել։ Իսկ Լուսիկը խնդում է։ Նա ձայնը լսեց, Փրոթկանին գտաւ։ այսքանն էլ բաւական է և բարձր ծիծաղում է։ Բայց վախենում է ձեռք տալ։ Լաւ յիշում է, թէ մի անգամ ինչպէս ձեռքը ծակեց, այնպէս ցաւռում էր։

Մի անգամ շատ ծիծաղեցին, երբ քեռի Գասպարը Փրոթկանին սեղանի վրա դրեց։ Բոլորը ճաշի էին նստել, իսկ ողնին վազվըզում էր սենեակում։ Նա երկի հոտից հասկացել էր, որ սենեակում միս կայ։ Փրոթկանը պտտում էր սեղանի տակ, քթով սրա նրան ոտները շօշափում, նոյնիսկ փորձեց ոտների վրայով բարձրանալ դէպի ծնկները։ Ողնին այդ անել կարողանում էր։ Երբ հայրիկը նստում էր աթոռի վրա և ոտքերը մեկնում, Փրոթկանը ոտների վրայով հայրիկի ծնկներին էր բարձրանում։ Նա այս տեղ տակ-տաք քնում էր կամ ուտելու բան ստանում։

—Մարգօ, —ասաւ Գասպար քեռին ծիծաղելով, —այ Մարգօ, ողնիդ ոտս կծում է։  
—Ո՞չ, քեռի, նա չի կծում, նա կծել չըգիտէ։

—Մարգօ, ողնիդ բարձրացել է կօշիկներիս վրա և չանգուռում է, նա ոտս կը կծի։ օֆ, օֆ։

Մարգօն քահ-քահ ծիծաղում էր, իսկ քեռի Գասպարը կոացաւ, բռնեց ողնուն և դրեց սեղանի վրա։

—Քեռի Գասպար, —գոչեց Մարգօն։

—Ի՞նչ ես անում, Գասպար, —ծիծաղեց հայրիկը և հաճոյքով նայում էր նորեկ հիւրին։

Տարօրինակ հիւրը ոչ թէ սեղանի տակն էր, այլ վրան։ Բոլորը զարմացել էին, բոլորը ծիծաղում էին, բոլորը հետաքրքրութեամբ նայում և սպասում էին, թէ ի՞նչ կանի ծակող գաղանիկը։

Մենակ ինքը ողնին ոչ վախենում էր, ոչ էլ զարմանում։ Նա սեղանի վրա էլ սկսեց վազվել այնպէս, ինչպէս գետնին։ Փրոթկանն իրան շատ ազատ էր զգում։

Ամեն ինչ հոտոտեց, ամեն տեղ քիթը խոթեց։ Ահա աղամանը, չէ, անուշ հոտ չի գալիս։ Ողնին մտաւ մէջը, մի բոպէում բոլոր աղը թափեց և փախաւ հեռացաւ։

—Դէ, դէ, —ասաց քեռին, —քեզ լաւ չես պահում, զգոյշ կաց։

—Ո՞յ, —գոռաց Մարգօն։

—Էս էլ քեզ զգուշութիւն, —ծիծաղեց հայրիկը։ Ողնին քիթը խոթեց ջրի բաժակը և շուտեց։ Այդ արարքը նրան գուր եկաւ. նա սկսեց ջուրը լակել։

— Վերցրէք դրան սեղանի վրայից, — խընդրեց մայրիկը, բայց իր ծիծաղն էլ էր գալիս: — Միւնոյն է, սփռոցը թրջեց, աղը թափեց, ամեն ինչ իրար տւեց. ոչինչ. թող մի լաւքէք անի:

Մարգօն հօ չափից դուրս ուրախացել էր. նրա ոզնին սեղանի վրա չարութիւններ է անում և ոչինչ, թոյլ են տալիս: Գասպար քեռին խնդրեց և մայրիկը թոյլատրեց. հայրիկն էլ է ծիծաղում. ուրեմն կարելի է. Այ քեզ լաւ բան: Իսկ ոզնին անում էր ինչ որ ցանկանում էր: Նա մօտեցաւ հացին, բայց չը կերաւ: Ողնիները երբէք հաց կամ բոյսեր չեն ուտում: Հայրիկի ամանում ոսկորներ էին մնացել, այդ աւելի համեղ էր: Փըռթկանը իսկոյն ամանի մէջ մտաւ և սկսեց ճաշել:

— Այ քեզ բարեկիրթ ոզնի, — քըքջում էր Մարգօն:

— Ինչու ես ծիծաղում, — հարցրեց քեռին. — Եթէ քեզ դնենք սեղանի վրա, դու աւելի մեծ անկարգութիւն կանես:

Ոզնին բացի մսից քաղցր բաներ էլ էր ուտառում: Նա Մարգօի և կուսիկի նման շատ էր սիրում շաքարեղէն և մարմելադ:

Մարգօն նրան միշտ քաղցր բանով էր հիւրասիրում, երբ ինքը մայրիկից որևէ բան ստանում էր: Նա Փըռթկանի համար ոչինչ չէր ինա-

յում: Փըռթկանը մարմելադը բռնում էր թաթիկներով և կրծում:

Փըռթկանը ցերեկը անց էր կացնում մի տաքու փափուկ անկիւնում. այստեղ նա քնում էր և պէտք է ասել, որ երկար էր քնում:

Ազատութեան մէջ, անտառում ոզնիները համարեա թէ ամբողջ օրը քնում են խիտ թփուտների մէջ շինած իրենց բնում: Իսկ գիշերները դուրս են դալիս, այս ու այն կողմ վազում ու կերակուր որոնում: Փըռթկանն էլ գիշերները հանդիսա քնել չէր կարողանում: Երեկոյեան դէմ նա աւելի առողջանում էր. իսկ երբ բոլորը քնում էին, նա սկսում էր վազվըղել սենեակներում:

Բայց Փըռթկանը ամենից շատ չարչարում էր Փիսօին և միջատներին ոչնչացնում էր:

Սըանց նա որսում էր գիշերը: Դրա համար էլ Փըռթկանին գիշերները խոհանոցում կամ մառանում էինք թողնում և միջատների հոգին հանում էր: Խոհարար Պօղոսը գովում էր ոզնուն:

— Այ թէ խելօք կենդանի է. շատ շնորհակալ եմ: Բոլորին բռնել է: Հիմի խոհանոցը կարգին մաքրւել է:

Մենք մի լաւ կատու ունէինք, անունը Փիսօ: Սըա հետ Փըռթկանը միշտ կուռում էր. բայց ինչ կարող էր անել կատուն ծակող ոզնուն: Երբեմն Փիսօն Փըռթկանի միսը գողանում

էր, այդ բանը Փըռթկանին շատ էր բարկացնում և նա կատաղաբար յարձակում էր Փիսօի վրայում, կուսիկն էլ չէր նստում սենեակում: Բոհայց Փիսօն էլ չէր երկարացնում, իսկոյն փախորն էլ ցանկանում էին բաց օդի մէջ գուրս չում էր: Փըռթկանը դրանով չէր բաւականա բալ, գնալ այգին, անտառը, էլ տանը նսաել նում: երբեմն ընկնում էր կատախ ետեից և իրչէր լինում:

ծուռտիկներով հալածում նրան:

Իսկ մի անգամ Փիսօի պոչից բռնեց երաւ: Ոչ ոք չը նկատեց, թէ ինչպէս և ուր գնաց այնպէս քաշքշել սկսեց, որ Մարգօն հազիւ հազնա: Տանը նրան որոնեցին բոլոր սենեակներում: վրա հասաւ և խեղճ Փիսօին ազատեց:

Ահա թէ Մարգօն ինչպիսի լաւ ոզնի ունէր:

Փըռթկանը ամբողջ ձմեռը ներսն ապրեց: Ա-նին անհետ կորաւ և նրան ոչ մի կերպ չը կարողատութեան մէջ, ձմեռը անտառում ոզնիները դացան գտնել:

Մարգօի Փըռթկանն ապրում էր տաք սենեակներում: Նա չէր տեսել և չը գիտէր, որ ձմեռը եկել է:

Երբ սենեակներում ցուրտ էր լինում, ոզնին համարեա թէ միշտ քնում էր, կամ շրջում էր տիսուր և կիսաքուն: Իսկ երբ վառարանները վառում էին, սենեակները տաքացնում, մին էլ տեսար, Փըռթկանը էլի օրօրւելով, ջարդւելով ման է գալիս:

Այդ ձմեռը շատ երկար էր, բայց վերջապէս անցաւ: Տաք օրերն սկսւեցին. գարունն եկաւ:

Արևն սկսեց սաստիկ այրել: Վառարաններն էլ չէին վառում. դուռ ու լուսամուտ բաց արին:

Մարգօն ամբողջ օրերով զբունում էր այս կատաղաբար յարձակում էր Փիսօի վրայում, կուսիկն էլ չէր նստում սենեակում: Բոհայց Փիսօն էլ չէր երկարացնում, իսկոյն փախորն էլ ցանկանում էին բաց օդի մէջ գուրս չում էր: Փըռթկանը դրանով չէր բաւականա բալ, գնալ այգին, անտառը, էլ տանը նսաել նում: երբեմն ընկնում էր կատախ ետեից և իրչէր լինում:

Ահա հէնց այդ ժամանակ Փըռթկանը կո-

ծուռտիկներով հալածում նրան:

Մարգօն լալիս էր: Նա չէր ուզում հաւատալ որ

Մարգօն լալիս էր սիրելի ոզնուն այլս չի տեսնելու: Բայց ոզ-

գատութեան մէջ, ձմեռը անտառում ոզնիները դացան գտնել:

—Մարգօ ջան, սիրելիս, մի՛ լար,—միխ-

թարում էր նրան հայրիկը: —Ամառը քեզ համար

մի ուրիշ ոզնի կը բռնենք:

—Ոչ, հայրիկ, —պատասխանում էր Մարգօն

և արցունքները հոսում էին նրա սեսե աչքե-

րից, —հարկաւոր չէ: Ես ուրիշ ոզնի չեմ ու-

զում: իմ Փըռթկանի նմանը էլ չի ճարւի. իսկ

ուրիշը ես չեմ ուզում. պէտք չէ:

Մարգօն երկար ժամանակ չէր հանգստա-

նում:

Բայց գարնանը այգում այնպէս ուրախ է, այնպէս լաւ: Եղանակն այնքան հրաշալի է, կա-

նա չը այնչափ գեղեցիկ: Թռչուններն այնպէս

հրաշալի են երգում: Եւ այնքան շատ թռչուն-

Արցունքները չորացան. Մարզօի տխրո  
թիւնն անցաւ. Աննման ողնու, սիրուն Փըռ  
կանի մասին մնաց միայն մի գեղեցիկ յիշողո  
թիւն.

ՅԵՐԵՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0390426

„ԵՐԵՎԱՆՈՒԿՆԵՐԻՆ“  
ԸՆԿԵՐՈՒԹԵՍՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագրութեամբ «ՀԱ.ԱԿԵԲ» ամսագրի  
1. Գատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ.  
Խնկոյեանի . . . . . 25

2. Աէլրի—Դերձակի աշակերտը, վօղըւիլ . . . . . 10

3. Աղեմն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պատկ—  
պսակ—պատկերագարդ հեքիաթներ . . . . . 10

4. Ս. Գոնաչեան — Կապիկներ, բնագիտական  
զրոյց . . . . . 10

5. Մարկ Տէն—Մահւան օղակը. պատմւածք,  
թարգմ. Մ. Թաւաքալեանի . . . . . 7

6. Կ. Ստանիլովիչ—Պատիկ նաւաստին. պատ-  
մւածք, թարգմ. Սիմակի . . . . . 5

7. Մարգար Ամեսիսինան—Երեք խրատ. Պղնձէ  
քաղաքի գրոյցներից . . . . . 20

8. Է. Մէտոն-Ծոմպոն—Գինիպեղի գայլը. պատ-  
մւածք հերոս կենդանիների կեանքից, թարգ.  
Սիմակի . . . . . 20

9. Լ. Պրայս եւ Ջ. Ֆիլմերտ—Առասպելական հե-  
րոսներ. թարգմ. Գ. Իփէկեան . . . . . 20

10. Ռուրէն Գաբրիէլեան—Ովկիանի թագաւորը.  
Կէտի մասին, բնագիտական զրոյց . . . . . 10

11. Մարդակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-  
պետը. Խտալական հէքիաթ. Ռուսկրէնից  
թարգմ. Ցովհ. Թոււմաննեան . . . . . 10

12. Խ. Բ. Բաբայեան—Նոր ընկերուհի, Մանկա-  
կան պիէս, մէկ արարւածով. . . . . 10

13. Գ. Միսեան—Ոսկեպողը, արևելեան աւան-  
դութիւն . . . . . 10

14. Փր. Փօկս—Մի ժամւայ նախարարը,  
պատմւածք թարգմ. Աթ. Խնկոյեանի . . . . . 15

15. Զիպօն և Պիպօն . . . . . 25

16. Շ. Նիպինգ—Կոտուկօ, պատմւածք թարգմ.  
Նիկ. Մարգսեան . . . . . 15

17. Դը-Ամիրչիս—Կարմիր մեխակ, պատմւածք,  
թարգմ. Բ. Վարդաննեան . . . . . 8

18. Աղաբար—Թուփար մ. ականական հաթ . . . . . 12

19. Սօֆիա Գոնաչեան—Առաջարկ օտ . . . . . 10

20. Ռիփա—Տափաստանը . . . . . 10

21. Ս. Տէր-Աւետիքեան— Քարայր կըլ, Ան-

տափի գիւտը . . . . . 8

22. Ս. Ս.—Պատահական բնական . . . . . 4

23. Եփիմ Սարգսիան—Փլը . . . . . 4

Դիմել «Հասկերի» խմբա-

3221